

Ա. Գ. ՄԱՆՈՒԶԱՐՅԱՆ

Հայաստանի տարբեր շրջաններում արձանագրված բազմաթիվ վկայագրերը հնարավորություն են ընձեռում կազմելու մոնղոլական տիրապետության շրջանի հայոց իշխանապետների՝ ամիրսպասալարների ու աթաբեկների ժամանակագրությունը: Այդ երկու պաշտոնները, ինչպես վիճական ազբյուրներն են վկայում, առավել հաճախ մեկտեղվել են:

Մոնղոլները, նվաճելով հյուսիսարևելյան Հայաստանը և մտցնելով թաթարական արևմտյան կուսակալության կազմի մեջ, գրեթե նույնությամբ թողեցին Զաքարյան իշխանապետության ներքին վարչաքաղաքական կառուցվածքը: Այն համարյա անփոփոխ էր նաև իլխանության շրջանում՝ 1256—1344 թթ.: Երկրի ներքաղաքական կյանքում ինչպես նախկինում, այնպես էլ հիմա առաջնայնությունը պատկանում էր Զաքարյան իշխանապետներին՝ աթաբեկ Ավագին ու ամիրսպասալար Շահնշահին:

Հայրենիքից հինգ տարով Ավագի բացակայության ժամանակ, որը պայմանավորված էր նախ Ոսկե Հորդա՝ Բաթու խանին, ապա Կարակորում՝ Մանգու Մեծ խանին (1251—1259) այցելությամբ, երկու պաշտոնները՝ ամիրսպասալարությունն ու աթաբեկությունը, ինչպես Անիի 1251 թ. վիճագիրն է վկայում¹, համատեղել է Շահնշահը: Արու զավակ շունեցող Ավագի մահից հետո՝ 1253 թ., պետական կառավարման գործերի մեջ է ներգրավվում Շահնշահի որդի Զաքարիան, որը շուտով ամբողջովին փոխարինում է պաշտոնաթող հորը: Ամիրսպասալար ու աթաբեկ Զաքարիան հակամոնղոլական ապրտամբություն կազմակերպելու մեղադրանքով 1261 թ. մահապատժի է ենթարկվում:

Մոնղոլները Զաքարյան տան մնացած անդամներին թեև իրավունք են վերապահում տնօրինելու սեփական տիրույթներում, սակայն նվազեցնում են նրանց քաղաքական-վարչական դերը՝ պաշտոնեության մեջ երկրի մյուս ազդեցիկ տոհմերի աչքի ընկնող ներկայացուցիչներից առաջ քաշելով Մահկանաբերդի իշխան Սաղուն Արծրունուն: Միջնադարի անպարտելի ըմբիշը՝ «Մեծ իշխանաց իշխան» Սաղունը, որպես «ամիրսպասալար», «աթաբեկ», հիշատակվում է Հաղբատի 1272 թ. և 1273 թ. վիճագրերում², իսկ Իջևանի շրջանի Առաքելոց վանքի 1273 թ. խաչքարում³ և նույն վայրի մեկ այլ արձանագրությունում՝ «աթապակ» պաշտոնով⁴:

¹ Տե՛ս «Դիվան հայ վիճագրության», պրակ 1, կազմեց Հ. Օրբելի, Երևան, 1966, էջ 64: Այսուհետև՝ Դիվան, պր. 1:

² Տե՛ս «Վիճական տարեգիր: Յուրաքանչյուր մոնղոլական արձանագրությանց հայոց», կազմեաց Կ. Կոստանեանց, Ս. Պ. ք., 1913, էջ 115: Այսուհետև՝ Վիճական տարեգիր:

³ Տե՛ս «Դիվան հայ վիճագրության», պրակ 6, կազմեցին Ս. Ավագյան, Հ. Զանգալյան, Երևան, 1977, էջ 218: Այսուհետև՝ Դիվան, պր. 6:

⁴ Տե՛ս Աույն տեղը, էջ 208:

Դամասկոսյան արյունահեղ ճակատամարտում Սաղուն Արժրունու հե-
րոսական նահատակությունից հետո՝ 1284 թ., ինչպես ընդունված է կարծել,
նրան փոխարինում է Սյունյաց կողմնապետ Տարսայիճ Օրբելյանը՝ Քազու-
դար Աճմադ իլխանին (1282—1284) գահընկեց անելու գործում թագի օրի-
նական ժառանգորդ Արղունին ցույց տված մեծ օժանդակության համար: Սա-
կայն այլ է վկայում վիմագրերի ուշադիր քննությունը: Սանահնի (ըստ Կ.
Ղաֆադարյանի՝ ԺԳ դարի, Կ. Կոստանյանի՝ շխթ:՝ 1300 թ.) վիմագրում
հիշատակվում է ոմն ամիրսպասալար Մխարզրծել, որը հայտնում է տիկնոջ՝
Վանանեի հետ սուրբ ուխտն այցի գալու և եկեղեցիներն ամեն հարկից ազա-
տելու մասին տեղեկությունը⁵: Մխարզրծելին հանդիպում ենք նաև Հաղբատի
(նորից ըստ Կ. Ղաֆադարյանի՝ ԺԳ դարի, Կ. Կոստանյանի՝ 1300 թ.) վիմա-
գրում տիկնոջ հետ, որն է՝ առաջինի ճիշտ ընթերցման համաձայն. «Վանենի
դուստր աթարակ Սաթունին» և երկրորդի սխալ հրատարակմամբ. «Աննա
դուստր, աթարէգին Գրիգորա»⁶: Ղ. Ալիշանը Մխարզրծելին (հայտնի է, որ
այս բառը, մեր խնդրո պարագայում՝ հատուկ անունը, վրացերենից երկայ-
նաբազուկ է թարգմանվում— Ա. Մ.), նույնացնում է ավելի ուշ հանդես
եկած Զաքարիայի՝ Շահնշահ Բ-ի և Խուանդզեի որդու հետ⁷:

Մխարզրծելն Արուճի արձանագրությունում, որի թվականը Կ. Կոստան-
յանը, առանց ուշադրություն դարձնելու գործող հայտնի անձանց տարեգրու-
թյանը, հրատարակել է «ՀՏ» (1325), հայտնում է իր ով լինելը. «... ի փաթ-
շալութեան Արղուն խանին, ի թագաւորութեան Դեմետրէի եւ ի պարոնութեան
Մխարկրծելին, եղբաւրն Իւանէի, որդույ մեծին Շահնշահի...»⁸: Արղուն ի-
խանն իշխել է 1284—1291 թթ., իսկ մյուսը՝ վրաց թագավոր Դեմետրե Բ-ն է
(=1280—1293)՝ աթարեկ Ավագի դուստր Խոշաֆի երկրորդ ամուսինը: Վի-
մագիրը հիշտ է թվագրել Հովհ. Շահխաթունյանցը «չլդ» (1285)⁹:

Որ Մխարզրծելը Շահնշահ Բ-ի որդի Զաքարիան չէ, այլ՝ Շահնշահ Ա-ի,
և եղբայրը ապստամբ ամիրսպասալար Զաքարիա Բ-ի, հավաստում է Քո-
րայրի վրացերեն վիմագիրը՝ ընթերցմամբ ու թարգմանությունամ Պ. Մուրադ-
յանի. «Քրոնիկոնի 499 (+780=1279 թ.)... ես Շահնշահ մանդատուր-թու-
խուցեսի որդի անարժան Մխարզրծել և իմ կողակիցը՝ աթարեկ և ամիր-
սպասալար Սաղունի աղջիկ Վանենը, արժանացաք կառուցելու մեր սույն
զանգակատուն-տապանատունը՝ մեծ նեղության մեջ եղած ժամանակ...»¹⁰:

Այսպիսով, նախքան Տարսայիճ Օրբելյանի՝ հայոց իշխանապետի պաշ-
տոնն ստանձնելը, ամիրսպասալարությունը կարճ ժամկետով, ոչ ավել մեկ
տարուց, վարել է Մխարզրծել Զաքարյանը: Կարծում ենք, որ այդ պատիվը
նրան շնորհել է Քազուդար իլխանը, որը գահին էր տիրացել 1282 թ. անօրի-
նական ճանապարհով: Իսկ երբ վերջինս, ընդամենը երկու տարի անց, գա-
հընկեց է արվել ու մահապատժի ենթարկվել, Մխարզրծելը պաշտոնազրկվել
է՝ իր տեղը զիջելով Տարսայիճ Օրբելյանին: Դա է պատճառը, որ նա Արուճի
1285 թ. արձանագրությունում հանդես է գալիս սոսկ որպես պարոն: Նրա

⁵ Տե՛ս Կ. Ղաֆադարյան, Սահահնի վանքը և նրա արձանագրությունները, Երևան, 1957, էջ 125: Հմմտ. Վիմական տարեգիր, էջ 140—141:

⁶ Տե՛ս Կ. Ղաֆադարյան, Հաղբատ, Երևան, 1963, էջ 171: Հմմտ. Վիմական տա-
րեգիր, էջ 151:

⁷ Տե՛ս Ղ. Ալիշան, Շիրակ, Վեճեսիկ, 1881, էջ 175, Գևա՝ Հայապատում, Վեճեսիկ, 1901, էջ 447:

⁸ Վիմական տարեգիր, էջ 182:

⁹ Հովհ. Շահխաթունյանց, Ստորագրութիւն կաթողիկէ Էջմիածնի և հինգ զավատացն
Արարատա, Բ. 2, Էջմիածին, 1842, էջ 61:

¹⁰ Պ. Մ. Մուրադյան, Հայաստանի վրացերեն արձանագրությունները, Երևան, 1977,
էջ 177:

ամիրսպասալարության ժամանակով էլ պետք է թվագրվի Սանահնի վերոհիշյալ վիճազիրը՝ «չլդ»՝ 1284 թ.:

«Հզար և մեծ գործակալ» Տարսայիճ Օրբելյանին, «որ էր այր զօրեղ պատերազմող և յաջողակ ամենայն գործս, նաև բարեպաշտ և աստուածասէր յոյժ»¹¹, դեռևս կենդանության օրոք փոխարինել է Սաղուն Արծրունու որդին՝ Խուժու-Բուզան, ինչպես վկայում է Ավանի երկլեզվյան ծածկագիր վիճագիրը¹²: Խուժու-Բուզա Արծրունին որպես ամիրսպասալար ու աթաբեկ հիշատակվում է նաև Իչևանի շրջանի Առաքելոց վանքի 1293 արձանագրութունում¹³: Այդ թվականին նրա վախճանվելուց հետո, համաձայն վիճական աղբյուրների հետագա տարեգրության, Հայաստանի քաղաքական կյանքում նորից կենտրոնական տեղ են գրավում Ջաքարյանները: Ամիրսպասալար ու աթաբեկ Շահնշահ Բ Ջաքարյանին հաջողվում է նաև վերականգնել Անիի նկատմամբ իր ժառանգական իրավունքը: Շահնշահ Բ-ն, իշխելով մոտ երեսուն տարի, վախճանվում է 1320 թ., ինչպես հաղորդում է Անիի այդ թվականի վիճագիրը¹⁴: Նրան հաջորդում է եղբայրը՝ Վահրամբ, որը որպես աթաբեկ հիշատակվում է Հոռոմոսի 1336 թ.¹⁵ և Անիի Աբլղարիբ Պահլավունու եկեղեցու 1342 թ. արձանագրութուններում¹⁶:

Վահրամ Աթաբեկից հետո որպես Հայաստանի իշխանապետ աղբյուրներում տեսնում ենք Բուրթեյ Օրբելյանին՝ Տարսայիճի թոռանը, որը ժամանակի նշանավոր քաղաքական ու դիվանագիտական գործիչներից էր:

Խաչատուր Կեչառեցու աշակերտ, գրիչ Բարդազը Եղեգիսում ավարտած իր հիշատակարանում Բուրթեյին կոչում է «արեաց վեհագոյն իշխանաց իշխեցող, մեծ կոմս և կողմնակալ»¹⁷: 1341 թ. Հայոց սպարապետ Բուրթեյ Օրբելյանը միաժամանակ հյուպաթոս էր իլխանության մայրաքաղաք Սուլթանիայում¹⁸: Բուրթեյի ամիրսպասալարության վիճական վկայություններն են նորատուսի 1344 թ. «իշխանին հայոց»¹⁹ և Հերհերի 1345 թ. «մեծ պարոն»²⁰ հիշատակութունները:

Հայոց վերջին ամիրսպասալար ու աթաբեկներն են Ջազա և Շահնշահ Գ Ջաքարյանները, որոնք հիշատակված են Բջնիի 1358 թ. զույգ վիճագրերում: Այս երկուսի ազգակցաբանական հարցերում կան տարակարծություններ: Հետազոտողներից ոմանք, հենվելով Բջնիի ս. Աստվածածին եկեղեցու հարավային պատին արտաքուստ փորագրված վիճագրի երկրորդ տողի՝ «Ես աթապակ Շահնշահի որդի աթապակ Ջազայս» սխալ վերծանության վրա (այն այդպես է հրատարակված Կ. Կոստանյանի «Վիճական տարեգրում»)՝²¹, Ջազա աթաբեկին համարել են Շահնշահ Գ-ի որդին²²: Իսկ վերջինիս հռչակել

¹¹ Ստեփանոս Օրբելյան, Պատմութիւն Գահանգից Սիսական, Տիֆլիս, 1910, էջ 416:

¹² Տե՛ս Կ. Ղաֆադարյան, Ավանի երկլեզվյան ծածկագիր արձանագրությունը, Երևան, 1945, էջ 21:

¹³ Տե՛ս Դիվան, պր. 6, էջ 208:

¹⁴ Տե՛ս Դիվան, պր. 1, էջ 24:

¹⁵ Տե՛ս Վիճական տարեգիր, էջ 165—166:

¹⁶ Տե՛ս Դիվան, Գույնը, էջ 44:

¹⁷ «ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», կազմեց Լ. Խաչիկյան, Երևան, 1950, էջ 377:

¹⁸ Տե՛ս Գույն տեղը, էջ 406:

¹⁹ «Դիվան հայ վիճագրության», պրակ 4, կազմեց Ս. Բարխուդարյան, Երևան, 1978, էջ 21:

²⁰ Ղ. Ալիշան, Սիսական, Վենետիկ, 1893, էջ 115—116:

²¹ Վիճական տարեգիր, էջ 169—170:

²² Տե՛ս Լ. Հ. Բաբայան, Հայաստանի սոցիալ-տնտեսական և քաղաքական պատմությունը 13—14-րդ դարերում, Երևան, 1964, էջ 360: Հայ ժողովրդի պատմություն, ՀՀ ԳԱԱ, հատ. 3, Երևան, 1976, էջ 642:

են Շահնշահ Բ-ի և Խուանդզեի որդի Զաքարիայի որդին: Հետագոտողներին թյուրիմացության մեջ է գցել նաև Բջնիի նույն եկեղեցու հյուսիսային պատին ներքուստ փորագրված 11 տողանի արձանագրության թերի հրատարակության՝ «ողորմութեամբ իմ պարոն Շահնշահի ... ի ժամանակիս բռնակալութեան Մելիք Աշրափին և Հաճի պէկին» հիշատակությունը²³: Այս երկու վիմագրերը հրատարակել ու մանրագնին քննության է ենթարկել Ծ. Մուշեղյանը²⁴: Նորովի ընթերցմամբ պարզվել է, որ Շահնշահ Գ-ն, ոչ թե Զազայի հայրն է, այլ որդին: Ինչ վերաբերում է Զազային, ապա նրան պետք է ենթադրել աթաբեկ Վահրամի և ամիրսպասալար Շահնշահ Բ-ի եղբայրը: Բջնիի այս երկու արձանագրություններն օտարների դեմ հայ ժողովրդի պայքարի արտացոլումն են: Աշրաֆ ալ-Չոբանին (1344—1357), Ատրպատականում վերացնելով մոնղոլ իլխանների տիրապետությունը և իրեն թագավոր հռչակելով, ասպատակում և ամայացնում է կենտրոնական Հայաստանը:

Մելիք Աշրաֆի զորավար Հաջի բեկի հրոսակները գրավել ու հիմնահատակ ավերել էին նաև Զաքարյանների Բջնիի ամրոցը, շատ անվանի մարդկանց սրի քաշել, եկեղեցիները քարուքանդ արել, քրիստոնյաներին անխնա կոտորելով՝ քաղաքի շորսրուրը անրնակ դարձրել: Ապավինելով Աստծուն և ազատագրված գյուղացի, զորապետ («սալահր ի մուլահրէս»)՝ Ամիրզեին²⁵ հեծելազորի գլուխ կարգելով՝ Շահնշահ Գ-ն ազատագրում է Բջնի քաղաքը, վերանորոգում եկեղեցիները, վերականգնում վանքի վիճակը՝ իր նախկին սահմաններով և ունեցվածքով, դրանք ազատում հարկերից:

Շահնշահ Գ Զաքարյանով ավարտվում է Հայոց իշխանապետների ժամանակագրությունը: Ավարտվում է նաև զարգացած ավատատիրության դարաշրջանը: Հայոց պատմության մեջ բացվում է մի նոր էջ, որը պետք է սեվացվեր հեռավոր անապատների քոչվոր ոչխարապահների վայրագ ասպատակություններով ու նոր տիրապետության հաստատումով:

А. Г. МАНУЧАРЯН— Хронография армянских ишханпетов (великих князей) по данным лапидарных надписей XIII—XIV вв.— Армянские лапидарные надписи XIII—XIV вв. дают возможность составить хронографию армянских ишханпетов — ампрспасаларов и атабеков в период ильханства: 1253—1261 гг.— Закаре II Закарян, 1261—1284 г.— Садун Арцруни, 1284 г.— Мхаргсцел Закарян, 1284—1287 гг. Тарсаун Орбелян, 1287—1291/3 гг.— Хутлу-Буга Арцруни 1291/3—1320 гг.— Шаханшах II Закарян, 1320—1340/2 гг.— Ваграм Закарян, 1240/2—1248 гг.— Буртел Орбелян, 1348—1350-ые годы Заза Закарян, 1350-ые годы — Шаханшах III Закарян:

²³ Վիմակաճ տարեգիր, Ըույճ տեղում:

²⁴ Ծ. Մուշեղյան, Բջնիի 1358 թ. արձանագրության մասին, «Տեղեկագիր», հաս. գիտ., 1956, № 7, էջ 98:

²⁵ Պարսկերեն այս բառերի ստուգաբանությունը տես Ծ. Մուշեղյան, Ուլ. աշխ.:

²⁶ Վիմագրագետ Գ. Գ. Սարգսյանը շտկել է 5-րդ տողում հիշատակված «Ամիրզե» անձնանունը, որը Գախրդ ուսումնասիրողները վերծանել են «Միրզե»՝ չնկատելով բառակզրի նոստատ (Մ...) փակագրի Ա-ի ստորին փոքր ստեղծը: Միշտ է, այս վիմագրում այդ ստեղծ հողմնաճարված է, քայց այն պարզորոշ երևում է գույգ բնագրերի Ամիրզեի արձանագրությունում (Տես Գ. Գ. Սարգսյան, Դիվան հայ վիմագրության (Արագածի, Ապաուսի, Հրազդանի, Սևանի շրջաններ)), ձեռագիր: